

ԳԼՈՒԽ ԺԲ.

1 Յաղագս Չորթուազու եպիսկոպոսի Վանանդայ:

2 Եւ Չորթուազ եպիսկոպոս Վանանդայ գաւառին, այր սուրբ, պարկեշտ, արժանի Աստուծոյ, արբեալ Ոգևով Սրբով. քրիստոնէութեամբ գնայր գործեր, առաջնորդէր իւրում ժողովրդեանն ըստ կամացն Աստուծոյ:

ԳԼՈՒԽ ԺԳ.

1 Յաղագս Տիրկան եւ Մովսեսի եպիսկոպոսաց:

2 Եւ էին երկու եպիսկոպոսք Բասենայ գաւառին, Մովսես եւ Տիրիկ. արք լաւք հրեշտակակրանք, սուրբ, հաւատացեալք, հրաւիրմանն արժանիք: 3 Առաջնորդէին իւրաքանչիւր ժողովրդոց ի ճանապարհն Աստուծոյ զամենայն աւուրս կենաց իւրեանց:

ԳԼՈՒԽ ԺԴ.

1 Յաղագս Ահարոնի եպիսկոպոսի:

2 Էր զայնու ժամանակաւ Ահարոն եպիսկոպոս ի մեջ Հայոց աշխարհի. այր երեւելի եւ անուանի, քաջ առաքինի. առաջնորդ իւրոց ժողովրդոց լուսաւորապէս զամենայն աւուրս կենաց իւրոց:

ԳԼՈՒԽ ԺԵ.

1 Յաղագս գլխաւորին եպիսկոպոսին Ասպուրակայ:

2 Եւ Էր գլխաւոր եպիսկոպոսաց Հայոց Ասպուրակ. այր սուրբ եւ բարեպաշտան, երկիւղած յԱստուծոյ եւ ի մարդկանէ: 3 Բայց ոչ ինչ կարեր յանդիմանութեամբ խաւսել ընդ ումեք. այլ ինքն ի լռութեան Էր եւ ի համեստութեան ի զգաստութեան ի պարկեշտութեան. ի պահս եւ յաղաթս յամենայն ժամ աղաչէր զԱստուած: 4 Բայց ի հանդերձն զգեւոյ՝ ըստ կրանիցն Չաւիւնայ գնայր Նա. ազաներ դամդայեալս եւ ժապաւինեալս: 5 Բայց Էր սա այր քաղցր եւ խոնարհ, բարերար եւ մարդասէր զամենայն աւուրս կենաց իւրոց:

ԳԼՈՒԽ ԺԶ.

1 Յաղագս Գնդայ սրբոյ եւ առաքինոյ. որ Էր գլխաւոր յայնմ ժամանակի ամենայն արեղայիցն Հայոց անապատաւորացն մենակեցացն եւ վաներայիցն:

2 Եւ Էր Գնդայ այս ի Տարան գաւառէ, եւ լեալ սա աշակերտ մեծի Դանիելի. եւ յետ Նորա Էր գլուխ արեղայից, եւ վարդապետ միանձանց, եւ առաջնորդ մենակեցաց, եւ վերակացու վաներայից, եւ ուսուցիչ ամենայն անապատաւորաց. եւ տեսուչ ամենեցուն՝ որք միանգամ վասն սիրոյն Աստուծոյ յաշխարհէ էին մեկնեալ, ի յանապատս բնակեալ, ի քարանձաւս ամրացեալք